Նախնական ուսումնասիրության
տեխնիկական առաջադրանք
հունիս 2016

Այս փաստաթուղթը, որպես ստանդարտացված մոդելային տեխնիկական առաջադրանք (ՏԱ/TOR), տրվել է ԱՃՊՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ԱՃՊՆ-ն ներդնող երկրների համար, որոնք ցանկանում են անցկացնել նախնական ուսումնասիրություն՝ ԱՃՊՆ-ի զեկույցի պատրաստման աշխատանքների շրջանակը պարզելու համար: Կախված աշխատանքների առանձնահատկություններից՝ երկրները կարող են օգտագործել ՏԱ-ի որոշակի մասեր կամ փաստաթուղթն ամբողջությամբ: (Փակագծերում) հատվածները պետք է լրացվեն բազմաշահառու խմբի կողմից: Այս փաստաթղթի վերաբերյալ հարցերը կարող են ուղղվել ԱՃՊՆ-ի քարտուղարությանը:

201- թվականի ԱՃՊՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանք, Հայաստանի Հանրապետություն, հունիս, 2017թ.

1. Ներածություն..... 2
2. Առաջադրանքի նպատակը 3
3. Աշխատանքների շրջանակները..... 5
   3.1. Աշխատանքների շրջանակները.արդյունքները.....11
4. Խորհրդատուին ներկայացվող պահանջները.....13
5. Վարչական ընթացակարգերը 13
6. Հղումներ .....**Error! Bookmark not defined.**

1. Ներածություն

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը խթանող համաշխարհային ստանդարտ է: ԱՃԹՆ-ի իրականացումը ունի երկու հիմնական բաղադրիչ.

- Թափանցիկություն. արդյունահանող ոլորտի կառավարման վերաբերյալ տեղեկատվություն՝ ընկերության վճարած և կառավարության ստացած համաձայնեցված վճարումները հրապարակայնորեն հասանելի են դառնում ԱՃԹՆ-ի զեկույցում կամ ԱՃԹՆ-ի բացահայտումները կառավարության և ընկերությունների համակարգերում ինտեգրելու միջոցով:

- Հաշվետվողականություն. կառավարության, կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից կազմված բազմաշահառու խումբը վերահսկում է բացահայտումների գործընթացը, տեղեկացնում է արդյունքների մասին, գործում է հաշվետվությունների ներկայացման գործընթացի արդյունքում ստացված առաջարկություններին համապատասխան և նպաստում է ԱՃԹՆ-ի ինտեգրմանը երկրում թափանցիկության ապահովմանն ուղղված ավելի լայն աշխատանքներին:

ԱՃԹՆ-ի ստանդարտն ունի արդյունահանող ոլորտի ամբողջ արժեքային շղթայի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման ամուր և միևնույն ժամանակ ճկուն մեթոդաբանություն և հնարավորություն է տալիս իրականացնել երկրի մակարդակով նավթի, գազի և հանքանյութերի արդյունահանումից կազմակերպությունների վճարումների ու կառավարության եկամուտների մոնիթորինգը և համաձայնեցումը: Այն խրախուսում է երկրներին վերակառուցել ԱՃԹՆ-ի տվյալների հավաքագրման գոյություն ունեցող հաշվետվական համակարգերը և պրակտիկան: Յուրաքանչյուր երկիր մշակում է ԱՃԹՆ-ի բացահայտումների սեփական գործընթացը՝ այն հարմարեցնելով երկրի հատուկ կարիքներին: Սա ներառում է հրապարակվող տեղեկատվության ծավալները և ուսումնասիրությունը՝ թե ինչպես է բացահայտվող տեղեկատվությունը ինտեգրվում կամ ինտեգրվելու կառավարության և ընկերությունների պորտալներում՝ արդյունահանող ոլորտի կառավարման բարելավման ավելի ընդհանրական ջանքերը լրացնելու և ամրապնդելու համար:

ԱՃԹՆ-ն ներդնող երկրներին ուղղված պահանջները սահմանված են ԱՃԹՆ-ի Ստանդարտում[1]: Լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են www.eiti.org կայքում:

1.1. Երկրում ԱՃԹՆ-ի ներդրման նախապատմությունը

(Այս բաժինը պետք է ներկայացնի լրացուցիչ տեղեկություններ երկրում ԱՃԹՆ-ի ներդրման նախապատմության մասին: Այստեղ պետք է ներառվեն ԲՇԽ-ի կողմից հաստատված և աշխատանքային ծրագրում ներկայացված ԱՃԹՆ-ի ազգային հստակ նպատակները: Պետք է հղում կատարվի աշխատանքային ծրագրին՝ տալով լրացուցիչ մեկնաբանություն ԱՃԹՆ-ի տվյալների՝ կառավարության և կազմակերպությունների պորտալների մեջ ինտեգրելու կտրվածքով՝ համապատասխան ԱՃԹՆ-ի հաշվետվությունների ընթացիկ կարգավիճակի և ԲՇԽ-ի նպատակների:)

Այս առումով (պատվիրատու կողմը) տեխնիկական առաջադրանքի համաձայն նախնական ուսումնասիրության կատարելու աշխատանքները պետք է հանձնարարի գիտակ և վստահելի ընկերության կամ անհատի:

2. Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է նախնական ուսումնասիրության զեկույցի հարապարակումը, որը ԲՇԽ-ին կտեղեկացնի ԱՃԹՆ-ի զեկույցում ներառվելիք տեղեկատվության ծավալների և այդ տեղեկությունները հրապարակելու առավել համապատասխան մոտեցումների մասին: Պետք է ներկայացվեն կառավարության համակարգերում և ընկերությունների պորտալներում բացահայտված տեղեկատվության ինտեգրման առաջարկվող տարբերակներ: Առաջադրանքով ակնկալվում է.

- ԲՇԽ-ի նպատակներին, աշխատանքային ծրագրին և ԱՃԹՆ-ի պահանջներին (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ պահանջներ) համապատասխան՝ հավաքել արդյունահանող ոլորտի կառավարման վերաբերյալ ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:
- Հասանելիության, հուսալիության և կառավարության ու ընկերությունների գործող համակարգերին փոխլրացման ապահովման նպատակով՝

[1] https://eiti.org/document/standard

առաջարկել տեղեկությունների բացահայտման ամրապնդման տարբերակներ (ԱՃԹՆ-ի ստանդարտի 7.2.c պահանջ և ԱՃԹՆ-ի բաց տվյալների քաղաքականություն[2]),

- «էականության» առաջարկվող սահմանման և ԱՃԹՆ-ի համաձայնեցման (զեկույցի) շրջանակների փաստաթղթավորման նպատակով բացահայտել արդյունահանող ոլորտից կառավարության ընդհանուր եկամուտները (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4, 4.1.d և 4.1.a պահանջներ),
- առաջարկել վճարումների և եկամուտների այն հոսքերը, որոնք պետք է ներկայացվեն և համաձայնեցվեն, այդ թվում՝ համապատասխան էականության շեմերը և ապաագրեգացման մակարդակները (կիրառելիության դեպքերում) (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1.a, 4.1.b և 4.7 պահանջներ),
- ներկայացնել ընկերությունների, պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունների և պետական մարմինների ցանկը, որոնք պետք է ներառվեն ԱՃԹՆ-ի զեկույցում՝ համաձայն էականության սահմանմանը (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1.c. պահանջ),
- ներկայացնել արդյունահանող ոլորտից լրացուցիչ եկամուտների հոսքերը, որոնք պետք է բացահայտվեն (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.2, 4.3, 4.4, 4.5 և 4.6 պահանջներ),
- նկատի առնել եկամուտների տեղաբաշխումը և ծախսերը, որոնք պետք է բացահայտվեն ԱՃԹՆ-ի շրջանակներում (ԱՃԹՆ-ի ստանդարտի 5-րդ և 6-րդ պահանջներ),
- գնահատել առկա տվյալների հուսալիությունը, այդ թվում, ուսումնասիրելով ընթացիկ աուդիտի պրակտիկան և հավաստիացումները, որոնք պետք է տրամադրվեն հաշվետվություն ներկայացնող անձանց կողմից (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.9 պահանջ),
- բացահայտել պահանջվող տեղեկատվության բացահայտման խոչընդոտները և առաջարկել դրանց վերացման տարբերակներ, ինչպես նաև,
- (հետաքննել ԲՇԽ-ի կողմից լիազորված ցանկացած այլ հարց:)

[2] https://eiti.org/document/standard

Անդրադառնալով վերոնշյալ կետերին՝ խորհրդատուից ակնկալվում է, որ ԲՇԽ-ին ներկայացնի տարբերակներ՝ հաշվի առնելով ընդհանուր նպատակները, ԱՃԹՆ-ի պահանջները, տեղական համատեքստը և հասանելի ռեսուրսները: Բազմաշահառու խումբը և անկախ ադմինիստրատորը զեկույցի կազմման շրջանակները որոշելիս պետք է օգտագործեն նախնական ուսումնասիրությունը՝ համաձայն «Անկախ ադմինիստրատորի ստանդարտ տեխնիկական առաջադրանքի[3]».

Խորհրդատուի զեկույցը պետք է ներկայացվի բազմաշահառու խմբին և լինի հասանելի հանրության համար:

3. Աշխատանքների շրջանակները

Խորհրդատուից ակնկալվում է իրականացնել հետևյալ **առաջադրանքները**.

1. Երկրում ԱՃԹՆ-ի ներդրման նպատակների և շրջանակների վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու նպատակով ԲՇԽ-ի աշխատանքային ծրագրի ուսումնասիրություն: Խորհրդատուն պետք է ուսումնասիրի նաև ԲՇԽ-ի կողմից հրապարակված տարեկան հաշվետվությունները՝ պարզելու համար նպատակների իրագործման առաջընթացը, և ԲՇԽ-ի կողմից իրականացված գործողությունները՝ ուղղված նախորդ ԱՃԹՆ-ի զեկույցների և վավերացման գործընթացների առաջարկությունների իրականացմանը:
2. Կիրառելիության պարագայում ուսումնասիրել նախորդ ԱՃԹՆ-ի և վավերացման զեկույցները՝ հասկանալու համար երկրում զեկույցների ներկայացման ընթացիկ շրջանակներն ու իրավիճակը և գնահատելու ոլորտները, որտեղ առկա է հետագա բարելավման անհրաժեշտություն:
3. Գնահատել, թե որքանով են ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող, ստորև բերված 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում ներկայացված կամ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրում սահմանված նպատակների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններն արդեն իսկ հասանելի հանրությանը: Գնահատել տեղեկությունների արդիականությունը, համակողմանիությունն ու հուսալիությունը և ներկայացնել առաջարկություններ, թե ինչպես հանրության համար հասանելի տվյալները կարող են բարելավվել կամ լրացվել, որպեսզի համապատասխանեն ԱՃԹՆ-ի պահանջներին և ԲՇԽ-ի նպատակներին:

[3] https://beta.eiti.org/standard/TOR-IA

ԱՃԹՆ-ի բացահայտումները

4. ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվում է բացահայտել արդյունահանող ոլորտի արժեքային շղթային համահունչ արդյունահանող ոլորտի կառավարման վերաբերյալ տեղեկատվությունը (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ պահանջներ): Խորհրդատուից ակնկալվում է նշել հետևյալ տեղեկությունների աղբյուրները և բացահայտման տարբերակները.

   i) իրավական և ինստիտուցիոնալ դաշտը, այդ թվում՝ պայմանագրերի և լիցենզիաների տրամադրմանն առնչվող բացահայտումներ (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.1-2.3 պահանջներ),

   ii) երկրի նավթի, գազի և հանքային պաշարների հետազոտման և շահագործման պայմանագրերի և լիցենզիաների բացահայտման գործընթացները և ընթացիկ բարեփոխումները (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.4 պահանջ),

   iii) երկրի հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, գործող կամ ներդրում կատարած ընկերությունների իրական սեփականատերերի ինքնությունը (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.5 պահանջ),

   iv) հետախուզման, արտահանման և արտադրության տվյալները (ԱՃԹՆ-ի ստանդարտի 3-րդ պահանջ),

   v) Կիրառելիության պարագայում՝ տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների դերի և կառավարության ու պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների ֆինանսական հարաբերությունների, քվազի-պետական ծախսերի և երկրում գործող նավթ, գազ ու հանքային նյութեր արդյունահանող ընկերություններում կառավարության մասնաբաժնի վերաբերյալ (ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.6, 4.6 և 6.2 պահանջներ),

   vi) ԱՃԹՆ-ի ստանդարտի 5-րդ պահանջին համապատասխան՝ տեղեկություններ եկամուտների հատկացման և տեղաբաշխման վերաբերյալ,

   vii) տեղեկություններ սոցիալական և տնտեսական ծախսերի ու տնտեսության մեջ արդյունահանող ոլորտի մասնաբաժնի վերաբերյալ (ԱՃԹՆ-ի ստանդարտի 6-րդ պահանջ), ինչպես նաև,

viii) (եթե ԲՇԽ-ի նպատակներին ու աշխատանքային ծրագրին համապատասխան պահանջվում է լրացուցիչ տեղեկությունների ներկայացման անհրաժեշտություն, դրանք պետք է սահմանվեն այստեղ)

5. Գնահատման հիման վրա՝ խորհրդատուն պետք է առաջարկի երկրի իրավիճակին և ԱՃԹՆ-ի ստանդարտին համահունչ ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի շրջանակը/կառուցվածքը: Տարբերակներին և առաջարկություններին ԲՇԽ-ին տեղեկացնելու համար խորհրդատուից ակնկալվում է.

   i) Գնահատել, թե որքանով է վերոնշյալ տեղեկատվությունը հասանելի կառավարության համակարգերում և (կամ) կորպորատիվ հաշվետվություններում ու արդյոք այդ տեղեկատվությունը հասանելի է առցանց, մատչելի ու հասկանալի է երկրի քաղաքացիների զգալի մասի համար:

   ii) Գնահատել առկա տվյալների արդիականությունն ու հուսալիությունը: Եթե կան տվյալների մի շարք հանրային աղբյուրներ, գնահատել դրանց միասնականությունը:

   iii) Գնահատել, թե արդյոք կան տվյալների բացահայտման խոչընդոտներ և առաջարկել, թե ինչպես կարելի է վերացնել հանրության համար հասանելի տվյալների բացերը: Խորհրդատուն պետք է գնահատի, թե արդյոք կառավարության համակարգերում առկա է տեղեկատվություն, որը հանրության համար հասանելի չէ, սակայն հեշտությամբ կարող է առցանց հրապարակվել: Օրինակ, եթե առկա է առցանց լիցենզիաների կադաստր, սակայն այն չի պարունակում ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվող բոլոր տվյալները, խորհրդատուն պետք է գնահատի, թե որքանով է հնարավոր բացակայող տեղեկատվությունն ընդգրկել առկա կադաստրում, այդ թվում՝ առաջարկելով այդ տեղեկատվությունը հանրության համար հասանելի դարձնելու տարբերակները:

   iv) Գնահատել, թե արդյոք ողջամիտ է ԱՃԹՆ-ի զեկույցում ոլորտի վերաբերյալ այլ տեղեկությունների բազահայտումը, որոնք ավելի թարմ են, քան ԱՃԹՆ-ի զեկույցում արտացոլված եկամուտներին վերաբերող տվյալները:

   v) Վերոնշյալի հիման վրա ներկայացնել առաջարկություն, թե ինչպես պետք է տեղեկատվությունը ներկայացվի ԱՃԹՆ-ի զեկույցում. արդյոք բավարար է ԱՃԹՆ-ի զեկույցում ներառել հղում առկա տեղեկատվությանը, թե ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է զետեղվի տեղեկատվության մասնակի կամ

ամբողջական նկարագրությունը, ինչ տեղեկություններ պետք է հավաքագրի անկախ ադմինիստրատորը և ինչ է կարելի ուղղակիորեն վերցնել աղբյուրից, ինչ թույլ կողմեր և մարտահրավերներ պետք է հասցեագրվեն ԱՃԹՆ-ի զեկույցում:

vi) Նախնական ուսումնասիրության զեկույցում փաստաթղթավորել հավաքագրված ամբողջ տեղեկատվությունը, աղբյուրները և գնահատականների հիմնավորումները:

6. Խորհրդատուից ակնկալվում է ԲՇԽ-ին տրամադրել վերոնշյալ բոլոր կետերի բացահայտումների գործընթացի ամրապնդման եղանակները և առաջարկություններ առաջնային՝ կառավարության և ընկերությունների պորտալներում տեղեկատվության ինտեգրման և երկրորդային՝ տեղեկատվությունը ԱՃԹՆ-ի զեկույցում հրապարակման միջոցով: Խորհրդատուն պետք է ուսումնասիրի տեղական հնարավորությունները (օրինակ, ինտերնետի հասանելիության մակարդակը), ինչպես նաև միջազգային լավագույն փորձը:

ԱՃԹՆ-ի համաձայնեցում

7. ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է արդյունահանող ոլորտից կառավարության եկամուտների լիարժեք բացահայտում, ինչպես նաև արդյունահանող կազմակերպությունների կողմից նյութական վճարների բացահայտում (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1.c պահանջ): Խորհրդատուից ակնկալվում է գնահատել եկամուտների և վճարումների վերաբերյալ տվյալների առկայությունն ու հուսալիությունը և ուսումնասիրել այս տեղեկատվությունը հասանելի դարձնելու լավագույն ուղիները: Այս նպատակով՝ ակնկալվում է, որ խորհրդատուն պետք է իրականացնի արդյունահանող ոլորտից կառավարության եկամուտների և վճարումների հոսքերի համապարփակ վերլուծություն, մասնավորապես՝ նշելով այն եկամուտների հոսքերը, որոնք պետք է ներկայացվեն՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1(b) պահանջի համաձայն: Վերլուծությունը պետք է ընդգրկի նաև պետական մասնաբաժին հանդիսացող արտադրանքի վաճառքից ու այլ բնեղեն եկամուտները (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.2 պահանջ), ենթակառուցվածքների ապահովումը և այլ բարտերային պայմանավորվածությունները (4.3), փոխադրումներից եկամուտները (4.4), պետական ձեռնարկությունների հետ կապված գործարքները (4.5), տեղական կառավարման մարմիններին

վճարումները (4.6), տեղական կառավարման մարմիններին փոխանցումներ (5.2), արդյունահանող ընկերությունների սոցիալական ծախսերը (6.1) և քվազի-ֆիսկալ ծախսերը (6.2):

8. Խորհրդատուից ակնկալվում է նկարագրել, թե 6-րդ կետում թվարկված եկամուտների և վճարումների վերաբերյալ տվյալներից որոնք են հանրության համար հասանելի առցանց կամ կառավարության ու ընկերությունների աղբյուրներից: Խորհրդատուն պետք է գնահատի այդ տվյալների արդիականությունը, համակողմանիությունը և հուսալիությունը (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.8 և 4.9 պահանջ): Եթե բացահայտումներն ամբողջական են, խորհրդատուն պետք է առաջարկություններ ներկայացնի, թե վճարումների և եկամուտների վերաբերյալ տվյալներն ինչպես կարող են հրապարակվել այլ միջոցներով (բացի ԱՃԹՆ-ի զեկույցը)՝ համաձայն, ԱՃԹՆ-ի ստանդարտի 7.2(c) պահանջի: Օրինակ, տվյալների ներառումը առցանց լիցենզիաների կադաստրում կամ տվյալների բազաների և հաշվետվությունների տեղադրումը կառավարության, ընկերությունների և (կամ) ԱՃԹՆ-ի ազգային կայքերում: Այն դեպքերում, երբ առկա են տեղեկատվական բացեր, խորհրդատուն պետք է առաջարկություններ ներկայացնի, թե ինչպես պետք է անդրադառնալ դրանց՝ նպատակ ունենալով ապագայում դրանք ներառել ԱՃԹՆ-ի զեկույցում:

9. Եկամուտների հոսքերի և վճարումների վերլուծությունից հետո խորհրդատուից ակնկալվում է.

   i) Ուսումնասիրել [____] թվականի կադաստրի ու եկամուտների տվյալները և առաջարկություններ ներկայացնել, թե հարկային վճարումների և պետական եկամուտների հոսքերից որոնք պետք է համարվեն էական՝ անհրաժեշտության դեպքում ներառելով ընկերությունների բացահայտումների էականության շեմերի վերաբերյալ առաջարկություն (հղում անելով 13-րդ ուղեցույցին և ԱՃԹՆ-ի ստանդարտի 4-րդ պահանջին):

   ii) Հիմնվելով առաջարկվող էականության սահմանման վրա՝ մշակել ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկվելիք՝ էական վճարումներ կատարող ընկերությունների նախնական ցանկը (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1.a պահանջ): Եթե էականության շեմ է առաջարկվում, պետք է գնահատվի ընկերությունների բացահատվող վճարումների չափը՝ համեմատած ոլորտից պետության ընդհանուր եկամուտների հետ: Պետք է նշվեն նաև ընկերությունների՝ հաշվետվություններում չընդգրկված ընդհանուր վճարումները (այն

վճարումները, որոնք էականության շեմից փոքր են) ամեն ընկերության համար հարաբերական չափերով (այս տեղեկատվությունը պետք է ապահովի ԱՃԹՆ-ի զեկույցի համակողմանիությունը՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1 պահանջի):

iii) Առկայության դեպքում յուրաքանչյուր ընկերության համար պետք է նույնականացվի.

1. ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը,
2. ոլորտը և շահագործման փուլը, այսինքն, հետախուզական աշխատանքներ, արտադրություն և այլն,
3. լիցենզիայի (թույլտվության) տեսակը և համարը,
4. [ԲՇԽ-ի կողմից պահանջված այլ տեղեկություն]:

iv) Հիմնվելով էականության առաջարկվող սահմանման վրա՝ պարզել, թե որ պետական մարմինները պետք է հաշվետվություններ ներկայացնեն: Անհրաժեշտ է նշել, որ, անկախ էականությունից, կառավարությունը պարտավոր է բացահայտել բոլոր եկամուտները (ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1.c պահանջ): Այսպիսով, երբ ընկերությունների համար սահմանվում են էականության շեմերը, տեղին կլինի ընկերությունների վճարումների և կառավարության եկամուտների հանձայնեցումը՝ համաձայն այդ էականության շեմերի: ԱՃԹՆ-ի զեկույցում պետք է բացահայտվի կառավարության ցանկացած այլ եկամուտ (էականության շեմից փոքր)՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.1(c) պահանջի:

v) Գործընթացի մասնակից պետական մարմինները պարզելիս խորհրդատուն պետք է ներկայացնի, թե արդյոք տեղական կառավարման (ինքնակառավարման) մարմիններն արդյունահանող ոլորտից ստանում են ուղղակի կամ անուղղակի եկամուտներ՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.6 և 5.2 պահանջների:

vi) Խորհրդատուն պետք է նույնականացնի համակողմանի բացահայտման գործընթացի իրավական, կարգավորիչ, վարչական կամ գործնական բոլոր խոչընդոտները և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի խոչընդոտների վերացման տարբերակներ և առաջարկություններ (օրինակները բերված են 11-րդ ուղեցույցում):

Հատուկ ուշադրություն պահանջող հարցեր

10. [Եթե առկա են ԱՃԹՆ-ի զեկույցի վերաբերյալ հատուկ հարցեր, որոնք պահանջում են առավել մանրամասն ուսումնասիրություն, դրանք պետք է շարադրվեն այստեղ՝ հղում անելով համապատասխան հարակից փաստաթղթերի:]

Տվյալների որակը

11. Եթե առկա են հրապարակված ԱՃԹՆ-ի զեկույցներ, պետք է ուսումնասիրել տվյալների որակի ապահովման նախկին մոտեցումները՝ ներառյալ անկախ ադմինիստրատորի և վավերացնողի կողմից կատարված առաջարկությունները (եթե այս հարցի կապակցությամբ առկա են ԲՇԽ-ի քննարկումներ և համաձայնեցվել են գործողություններ, դրանց պետք է հղում տրվի):

12. Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.9 պահանջի՝ պետք է ուսումնասիրել ԱՃԹՆ-ի զեկույցի մշակման գործընթացում ամենայն հավանականությամբ ընդգրկվելիք կազմակերությունների և պետական մարմինների աուդիտի ու երաշխավորման գործընթացները՝ ներառյալ համապատասխան օրենսդրությունը և կարգավորումները, պլանավորված և ընթացիկ բարեփոխումները, ինչպես նաև պարզել՝ արդյոք այդ գործընթացները համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Պետք է ուսումնասիրել հանրային աղբյուրներից հասանելի տվյալների արժանահավատությունը և ներկայացնել առաջարկություն դրանց բարելավման եղանակների վերաբերյալ:

13. Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի 4.9 պահանջի՝ առաջարկել երաշխիքներ, որոնք պետք է ներկայացվեն անկախ ադմինիստրատորին հաշվետվություն ներկայացնողների կողմից:

Աշխատանքների շրջանակները. արդյունքները

14. Խորհրդատուն պետք է ներկայացնի.

    1. ներածական զեկույց,
    2. զեկույցի նախագիծ,
    3. վերջնական զեկույց, որը պետք է արտացոլի համաձայնեցված ժամկետներում իրականացված խորհրդատվությունը:

Ներածական զեկույց	Զեկույցի նախագիծ	Վերջնական զեկույց
Պետք է ներկայացվի ԲՇԽ-ի կարծիքին խորհրդատուի նշանակումից [____] շաբաթ հետո:	Պետք է ներկայացվի ԲՇԽ-ի կարծիքին խորհրդատուի նշանակումից **[____]** շաբաթ հետո [ԲՇԽ-ն կարող է սահմանել փաստաթղթերի չափի մասին դրույթ]:	Պետք է ներկայացվի ԲՇԽ-ի կարծիքին և հաստատմանը խորհրդատուի նշանակումից **[____]** շաբաթ հետո:
Նախնական փաստաթղթային ուսումնասիրության հիման վրա՝ ներածական հաշվետվությունը պետք է ներառի մեթոդաբանությունը, աշխատանքների շրջանակները և ժամանակացույցը:	Առաջադրանքների ավարտուն տեսքով [1-13 առաջադրանքներ՝ կախված երկրի կարիքներից] ներկայացում:	Պետք է մշակվի և ներկայացվի վերջնական զեկույց, որը ներառում է մնացած առաջադրանքները և ԲՇԽ-ի, պատվիրատուի ու ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության մեկնաբանությունները (դիտողությունները):
ԲՇԽ-ն գրավոր կարգով խորհրդատուին պետք է ներկայացնի առաջարկություններ և դիտողություններ [____] շաբաթվա ընթացքում:	ԲՇԽ-ն, պատվիրատուն և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունը պետք է ներկայացնեն առաջարկություններ և դիտողություններ [____] շաբաթվա ընթացքում:	ԲՇԽ-ն և պատվիրատուն, համաձայն պայմանագրի կետերի, պետք է հաստատեն զեկույցը:

Խորհրդատուն պետք է մշակի և ԲՇԽ-ին, պատվիրատուին ու ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը առաջարկությունների և դիտողությունների ներկայացնի նախնական ուսումնասիրության ներածական զեկույց և (կամ) զեկույցի նախագիծ՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Խորհրդատուն, ներկայացված առաջարկությունները և դիտողությունները նախնական ուսումնասիրության զեկույցի հաջորդ տարբերակներում արտացոլելու նպատակով, կարող է խորհրդակցել կողմերի հետ:

Խորհրդատուն, ըստ սահմանված ժամանակացույցի, պետք է ընդգրկի ԲՇԽ-ի, պատվիրատուի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության մեկնաբանությունները և ԲՇԽ-ին ներկայացնի վերջնական զեկույց՝ ներառելով (201_) թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի և հաջորդ նախնական ուսումնասիրության զեկույցների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

ԲՇԽ-ն և պատվիրատուն պետք է հաստատեն զեկույցը՝ համաձայն պայմանագրի կետերի:

[Լրացնել այլ արդյունքներ և ժամանակացույցը)

4. Խորհրդատուին ներկայացվող պահանջները

Խորհրդատուն պետք է ցուցաբերի.

- Տեխնիկական և ֆինանսական հմտություններ, այդ թվում՝ գիտելիքներ և աշխատանքային փորձ թափանցիկության և կառավարման, հանրային ֆինանսների ու ֆինանսական հաշվետվողականության և բազմաշահառու կողմերի երկխոսության ոլորտներում: Ցանկալի է ԱՃԹՆ-ի հետ կապված աշխատանքային փորձի առկայությունը:
- Երկրի հանքարդյունաբերության և բնական պաշարների ոլորտի իմացություն,
- Նմանատիպ աշխատանքի փորձ:

[Անհրաժեշտության դեպքում լրացնել այլ պահանջներ]

5. Վարչական ընթացակարգերը

[Լրացնել տեղեկություններ հաշվետվությունների ներկայացման, խորհրդատուին աջակցություն ցուցաբերելու, այլ վարչարարական ընթացակարգերի վերաբերյալ:]

6. Հղումներ

- **The EITI Standard**, in particular Requirements 2 -7, http://eiti.org/document/standard;
- **EITI implementation guidance notes** issued by the International Secretariat, http://eiti.org/document/guidance-notes-implementing-countries, in particular the guidance notes on scoping (#9), on addressing tax payer confidentiality in EITI reporting (#11), defining materiality (#13), publication of data (#19) and the open data policy (in the EITI Standard). The consultant is advised to contact the EITI International Secretariat for any questions or clarifications related to the EITI Standard and the implementation of the EITI requirements;
- **Agreed upon procedures for Independent Administrators**, including standard EITI reporting templates, available from the International Secretariat;
- Examples of Scoping Studies, available from http://eiti.org/document/guidance-notes-implementing-countries and the International Secretariat; and

- [Add other relevant sources of information, including links to EITI Reports, information about licensing systems etc.]